վանդակ ինչ ինչ աշուղական քերթուածները Յովհ. Թուլկուրանցիի, Նադաշի, Ֆրկանի, Դրիգոր վարդապետի և Ներսես կաթողիկոսի, (վերջինս՝ 137 հանելուկ, գրօսանքի համար): Տաղերուն սկիզբը գետեղուած են կիսախորան զարդեր:

Ախթարմ (2 օրինակ Վենետիկի Մխիթարեանց և Կեսարիոյ Ս. Կարապետի վանքերը), 24 ութածալ թերթ (296 էջ) այբուբենով թուարկուած, կր'նագոյն, 16 սնր. երկայն և 10 լայնք: Կը բովանդակէ սնապաշտիկ սովորոյթներ, գուշակութեան ադուաշ դրուագներ, արանց և կանանց նկարագիրները որոշող մասեր՝ համեմատ այն կենդանակերպերուն որոնց տակ ծնած են անոնք, նաեւ կենդանակամարի պատկեր մը՝ Զոդիակոսի նշաններով, տարեցոյց (տանուտէրացոյց), ամսացոյց, երագահան և խառնափնթոր տիեզերագրութիւն մը, հուսկ ուրեմն բժշկարան մը (հաքիմարան, Գալիանոս բժիշկին:

* * Հայ Մատենագրութեան իր'նչ թանկագին ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլար «Մէղապարտ» այս Յակոբը, եթէ հայկական տպագրութիւնը սաղմնած այդ օրերուն՝ կարենար ձեռք անցունել, զոր օրինակ, Հայկի սերնդեան ծագումն ու պատմութենեն ճառող մէկ քանի ձեռագիր լուրջ երկեր և զայնս անդարձ կորուստէ փրկելով՝ փոխանակէր այս կորէ-կոցուկ, աղճատ և աղկաղկ գործերուն հետ:

2Ա. **Ընդար Դպիր** — Էջմիածին՝ պարսկական կեղեքումներէ նեղուող կաթողիկոսին Միքայէլ Ա. Սեբաստացի՝ երբ առժամապահ իր ծննդավայրը կ'ուղեւորի, եկեղեցականներէ ժողով կը գումարէ, ուր կ'որոշուի Սեւանքերիմ թագաւորին սերունդեն ԱԲԳԱՐ ԴՊԻՐՆ (այլ անուամբ Սաֆար կամ Սէֆեր) զաւակին և քահանայի մը ընկերակցութեամբ Հռոմ ուղարկել ընծաներով, Պապէն օգնութիւն խնդրելու համար: Նուիրակութիւնը հազիւ 2 տարիեն՝ 1564 ին հոն կը հասնի և սիրալիր ընդունելութեան մը կ'արժանանայ Պիոս Դ. էն որ յատուկ բնակարան մը կը շնորհէ անոր: Արգար ապա Պապէն հրահանգ կ'ստանայ՝ Հայոց Հայրապետը Հռոմ հրաւիրելու, որպէս զի երես առ երես կարենան տեսնուիլ և դարման մը խորհիլ վարատակաւ Հայութեան դարտերուն: Այս ճամբորդութեան համար Արգար՝ Պապէն որոշուած ուղեկից եպիսկոպոս մըն ալ ունէր հետը, զոր Կիպրոս կը դրկէ Վենետիկ հասնելուն, իրեն սպասելու համար: Վերջինս կը մնայ մինչեւ սակայն նոյն կղզին: Միեւնոյն ատեն Արգար կ'իմանայ թէ Թուրքերը հաստ եղեր են իր նպատակին: Այս պարագան կը տրամեցուցնէ զինք, ինչու որ մրտադիր էր Կ. Պոլիս անցնելու: Կը մնար իրեն՝ տարբեր կերպարանք մը տալ գործին, որպէս զի Թուրքիա ոտք կոխելուն՝ կարենար ի հարկին ապացուցանել թէ Եւրոպա իր դեղերումը հեռի էր ազգային-քաղաքական որ և է հանգամանքէ: **Տրպագրութեան արուեստն էր փրկարար յերիւրանքը կրնար ըլլալ:** Այս առաջադրութեամբ, 1565 ին (այսինքն միեւնոյն քաղաքը «մէղապարտ Յակոբ»ի տպագրական գործունէութենեն 52 տարի վերջ) կ'աջողի տալ միաբերք մեծադիր օրացոյց մը **Խառնայ փնքուր տումարի, գեղեցիկ եւ պիտանի** խորագիրով որ Հայոց առաջին օրացոյցն է տպագիր, իր յորջորջումին պէս «խառնափնթոր», ատրեւ պարունակելով քանի մը տարիներու լուսնային խաւարումներն ալ: Ասոր կը յաջորդի **Սաղմոսարան** մը, որմէ մէկ օրինակ կը գտնուի ցարդ Ամբրոսիոսեան մատենադարանը (Միլան): Ինք ատոնց տառերը նախօրօք պատրաստել տուած էր Հռոմ, Պապին ձեռնտուութեամբ: Իր որդին Սուլթանշահ՝ հօրը



ԱԲԳԱՐ ԴՊԻՐ Արգարի որդին ՍՈՒԼԹԱՆՇԱՀ
(Սոյն պատկերները նախօրինակին վրայէն կենդանացուցած է Դ. Սրապեան, Վ. Զարդարեանի «Յիշատակարան»ին համար):